Քանի ուշ չէ, հարկավոր է խաղաղություն

Մոսկովյան «*Կուրանտի*» թերթի մայիսի 31-ի համարում տպագրված Մեհման Կաֆարովի հոդվածը վերաբերում է ԼՂԻՄ-ի բնակիչների «ցանկությանը», «Օգնեցեք հաշտվել հարեւանների հետ»: Մարդիկ հոգնել են չորս տարվա հակադրությունից ու թշնամությունից: Երկու կռվող կողմերը չեն էլ մտածում, որ կա մի երրորդ ուժ, որը շահագրգռված է Ղարաբաղում լարվածության պահպանմամբ: Մինչդեռ կենտրոնի վարած քաղաքականությունից տուժում են ե՛ւ հայերը, ե՛ւ ադրբեջանցիները:

Ըստ որոշ տվյալների, միութենական իշխանությունները, օգտագործելով կոնֆլիկտային իրավիճակը, պլանավորում են ԼՂԻՄ-ում զինվորական այն հավաքակազմի տեղակայումը, որը դուրս է բերվել Արեւելյան Եւրոպայի նախկին սոցիալիստական երկրներից: Ղարաբաղը կվերածվի մի հսկայական զինտեղամասի, որտեղից հեշտությամբ կտարվի երկու հանրապետությունների վրա ազդելու քաղաքականություն: Այդժամ, ուշ կլինի խաղաղության մասին խոսել: